ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

  Սերոբ Անտինյան

- ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

  ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության պետի տեղակալ

- ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐ ԵՎ ԺԱՄԿԵՏ

  Փարիզ (Ֆրանսիա), 20-23 մայիս, 2019 թ.

- ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

  ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UNESCO) քարտուղարություն

- ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն՝

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցառումների մասին» 1970 թ. Փարիզի կոնվենցիայի Անդամ պետությունների 5-րդ համաժողովի նստաշրջանին,

Կոնվենցիայի Անդամ պետությունների Օժանդակ կոմիտեի (Subsidiary Commettee) 7-րդ նստաշրջանին,

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, հանդիսանում է 1970 թ. Փարիզի կոնվենցիայի անդամ (ՀՀ-ը անդամակցում է կոնվենցիային 1993-ից), ինչպես նաև՝ անդամ պետությունների Օժանդակ կոմիտեի անդամ (2015-ից): Անդամ պետությունների համաժողովը և Օժանդակ կոմիտեն հանդիսանում են Կոնվենցիայի պաշտոնական մարմինները, որոնց նստաշրջանները պարբերական են և, համաձայն գործող կանոնակարգերի, գումարվում են երկու տարին մեկ անգամ (Անդամ պետությունների նստաշրջան), կամ յուրաքանչյուր տարի (Օժանդակ կոմիտեի նստաշրջան): Նստաշրջաններին հայաստանյան պատվիրակությունը ունենում է պարտադիր մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և պետական լիազոր մարմնի (մասնագիտացված կառույց) ներկայացուցչի կազմով:

Կոնվենցիայի պաշտոնական մարմիններին անդամակցությունը և մասնակցությունը տեղի ունեցող նստաշրջաններին մեծ կարևորություն ունեն ինչպես վերը նշված կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, կոնվենցիայի լիարժեք կիրարկման, այդ ուղղությամբ իրականացվող ներպետական ընթացակարգերի կատարելագործման, այնպես էլ ՀՀ մշակութային քաղաքականության իրականացման համատեքստում միջազգային կապերի ու համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման, լավագույն իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրման և ներդրման առումներով:

Մարմինները կոչված են կոնվենցիայի կիրարկման շրջանակներում մշակել և անդամ պետություններին ներկայացնել մասնագիտական ուղեցույցներ, առաջարկներ, մեթոդաբանական և այլ փաստաթղթեր: Հանձնաժողովների նիստերին քննարկվում և ընդունվում են բանաձևեր, առաջարկներ, հավելվածներ և այլ փաստաթղթեր, որոնք

տրամադրվում են պետություններին կատարման նպատակով: Մասնակցությունն այդ փաստաթղթերի մշակմանը, ՀՀ մշակույթի նախարարության տեսակետների և դիրքորոշումների ամբողջական ներկայացումն ու ընդգրկումը այդ փաստաթղթերում կարևոր նշանակություն ունի իրականացվող մշակութային քաղաքականության և միջազգային համագործակցության տեսանկյունից: Անդամ պետությունների ընդհանուր համաժողովը Կոնվենցիայի բարձրագույն մարմինն է, որը վերջնականապես հաստատում է կոմիտեներում մշակված բանաձևերը, ուղեցույցները, խորհրդատվական և մեթոդական բնույթի փաստաթղթերը, տրամադրելով դրանք պետություններին որպես ցուցումներ և մեթոդական ուղեցույցներ՝ ի կատարումն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների:

- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1970 թ. կոնվենցիայի Անդամ պետությունների հանդիպման (Meeting of State Parties) 5-րդ նստաշրջան (մայիսի 20-21-ը)

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

- ✓ Անդամ պետությունների համաժողովի ղեկավար կազմի (Բյուրո) ընտրություններ (Նախագահ, փոխհանախագահներ, զեկուցող),
- ✓ Անդամ պետությունների համաժողովի 4-րդ և Օժանդակ կոմիտեի 5-րդ և 6-րդ նստաշրջանների աշխատանքների մասին բանավոր զեկույցներ,
- ✓ Քարտուղարության զեկույցը իր գործունեության վերաբերյալ,
- ✓ 1970 թ. Կոնվենցիայի հիմնադրամի օգտագործման մասին հաշվետվություն,
- ✓ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար մարմինների աշխատանքային մեթոդների, գործող կարգերի և կառավարման հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի առաջարկների կատարման հաշվետվություն,

- ✓ Թանգարանների և թանգարանային հավաքածուների պահպանության և հանրահռչակման, դրանց բազմազանության և հանրության մեջ ունեցած նշանակության վերաբերյալ խորհրդատվությունների մասին,
- ✓ Կոնվենցիայի կիրարկման արդյունավետության բարձրացմանը միտված գործընթացների մասին զեկույց,
- ✓ Կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի ներկայացումներ անդամ պետությունների կողմից:
- ✓ Օժանդակ կոմիտեի փոփոխվող կազմի ընտրություններ,
- ✓ Անդամ պետությունների գործող կանոնակարգի փոփոխություններին առնչվող աշխատանքային փաստաթղթի ներկայացում, քննարկումներ,

1. Նստաշրջանը մեկնարկեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի մշակութային հարցերով օգնականի բացման ելույթով: Խոսվեց **մշակութային կոնվենցիաների կարևորության** մասին, հատկապես առանձնացվեցին Փարիզի 1970թ. և Հռոմի 1995թ. (UNIDROIT) կոնվենցիաները, դրանց անդամակցող պետությունների կողմից այդ կոնվենցիաների կիրարկման գործուն մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Հատուկ անդրադարձ կատարվեց միջկազմակերպական համագործակցության խնդիրներին, հատկապես իրավապահ և դատական համակարգերի հետ աշխատանքի կարևորությանը: Նշվեց, որ կա արդյունավետ պրակտիկա այնպիսի կառույցների միջև համագործակցության, ինչպիսիք են՝ UNIDROIT, Համաշխարհային մաքսային կազմակերպությունը (WCO), ԻՆՏԵՐՊՈԼ-ը, Թանգարանների միջազգային կոմիտեն:
2. Նիստի քարտուղարի կողմից հանգամանալի ներկայացվեցին Օրակարգի հարցերը: Ներկայացվեցին աշխատանքային փաստաթղթերը, որոնք նախատեսվում է քննարկել նստաշրջանի ընթացքում:
3. Հայտարարվեց **Անդամ պետությունների համաժողովի Բյուրոյի** (նախագահ, չորս փոխնախագահներ, զեկուցող) ընտրությունների մեկնարկի մասին:

Նախագահի պաշտոնում Եգիպտոսի կողմից առաջադրվեց **Բենինի Հանրապետության ներկայացուցիչ, դեսպան Իռենե Բենվենյու Զենուվոյի** թեկնածությունը, ով ՅՈՒՆԵՍԿՕ-ում Բենինի մշտական ներկայացուցչության ղեկավարն էր:

Զեկուցողի պաշտոնում Եգիպտոսն առաջադրեց Հունգարիայի ներկայացուցչի թեկնածությունը:

Համաժողովի չորս փոխնախագահների պաշտոններում առաջադրվեցին համապատասխանաբար Լիբիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Աֆղանստանի թեկնածությունները:

Առարկություններ և այլ առաջարկություններ չեղան և առաջադրված թեկնածություններով հաստատվեց նախագահության հետևյալ կազմը՝

Նախագահ՝ *Իռենե Բենվենյու Զենուվո (անվանական)՝ Բենինի Հանրապետություն:*

Զեկուցող՝ *Հունգարիայի Հանրապետություն*

Փոխնախագահներ՝ *Լիբիա, Իտալիա, Ճապոնիա և Աֆղանստան (ներկայացուցիչների միջոցով):*

4. Անդամ պետությունների համաժողովի գործող նախագահի (Պանամա) կողմից ներկայացվեց Բանավոր զեկույց Անդամ պետությունների հանդիպման Չորրորդ նստաշջանի վերաբերյալ: Խոսվեց նստաշրջանում քննարկված հարցերի, ընդունված արձանագրությունների, կայացված որոշումների, ինչպես նաև գործող Օժանդակ կոմիտեի ընտրությունների:

5. Գործող Օժանդակ կոմիտեի քարտուղարը (Թուրքիա, Զեյնեբ Բոզ) հանդես եկավ Օժանդակ կոմիտեի հինգերորդ (2017թ. մայիս) և վեցերորդ (2018թ. մայիս) նստաշրջանների մասին Բանավոր զեկույցով: Խոսվեց կրթական ծրագրերի (UNITWIN) մասին, միջազգային համագործակցության խթանման, առցանց վաճառքների, իրազեկության բարձրացման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին: Հատուկ անդրադարձ կատարվեց նախորդ նստաշրջաններում երկրների կողմից **կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի ներկայացմանը, նշվեց, որ այդ փորձի ներկայացման զեկույցներով հանդես եկան Մեքսիկան, Վենեսուելան, ինչպես նաև**

Հայաստանը: Խոսվեց ինտերնետային աճուրդների, մշակութային արժեքների շուկաների հետ աշխատանքի, կոնվենցիայի հարցաշարի կատարելագործման, ինչպես նաև դատահիրավական համակարգի հետ աշխատանքի կարևորության մասին:

6. Քարտուղարության զեկույցն ընդգրկում է 2017թ. մայիս - 2019թ. ապրիլ ընկած ժամանակաշրջանը: Խոսվեց հաշվետու ժամանակաշրջանում Կոնվենցիային անդամակցելու դրական արդյունքների մասին: Ըստ այդմ՝ Կոնվենցիային միացել են ևս ութ պետություն (Բենին, Բոստվանա, Ջիբուտի, Եթովպիա, Լատվիա, Մոնակո, Տոգո, Միացյալ Արաբական Էմիրություններ)՝ վավերացրած երկրների թվաքանակը հասցնելով 139-ի: Բանախոսն անդրադարձավ անդամ պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցներին: Նշվեց, որ առաջին անգամ դրանք ներկայացել են էլեկտրոնային եղանակով, ինչը դրական արդյունքներ է ունեցել ներկայացվող զեկույցների կատարման առումով: Պետությունների կողմից ներկայացվել են աննախադեպ թվով զեկույցներ՝ 68 պարբերական զեկույց, ինչը շատ լավ ցուցանիշ է Կոնվենցիայի կենսագործման հաշվետվողականության համար: Նշենք, որ **Հայաստանը զեկույցը հաջողությամբ ներկայացրած երկրների թվում է:**

Անդրադարձ կատարվեց միջազգային կազմակերպությունների հետ արդյունավետ և նպատակային գործակցությանը (INTERPOL, UNIDROIT, CoE, ICOM, EU և այլն): Այս համատեքստում առանձնացվեց ուսուցողական բազմաթիվ ծրագրերի, կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը:

Խոսվեց ՄԱԿ-ի բանաձևերի կատարման ընթացքի մասին: Արձանագրվեց, որ Քարտուղարությունը նախորդ երկու տարի շրջաբերականներ է ուղարկել անդամ պետություններին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 2199 և թիվ 2347 բանաձևերի կատարման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով՝ հիմք ընդունելով այդ երկրների և միջազգային կառույցների համագործակցությունը (UNODC, INTERPOL, UNIDROIT, WCO, ICOM): Նշվեց, որ 29 երկրներից ստացված պատասխանների հիման վրա (**այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության**) մշակվել է նշված բանաձևերի կատարման վերաբերյալ զեկույց:

Ներկայացվեց տեղեկատվություն կորած, ապօրինի արտահանված մշակութային արժեքների մասին քարտուղարություն ուղարկվող հարցումների, քարտուղարության միջոցով իրականացված արժեքների վերադարձի և ռեստիտուցիայի վերաբերյալ: Որպես առանձին թեմաներ, զեկույցի մեջ արծարծվեցին արվեստի շուկաների հետ համագործակցության, ինչպես նաև արտակարգ դեպքերի և գործողությունների հարցերը:

Որպես ծրագրային կարևոր միջոցառումներ, Քարտուղարությունն իր զեկույցում առանձնացրեց իրազեկության բարձրացմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները: Կարևորվեց կրթությունն ու իրազեկության բարձրացումը մշակութային արժեքների ապօրինի տեղաշարժը կանխարգելելու, կորած, գողացված արժեքները ժամանակին հայտնաբերելու և օրինական սեփականատերերին վերադարձնելու գործում: Խոսվեց հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ իրականացրած կոնկրետ միջոցառումների մասին (Բեյրութում, Լիբանան կայացած ծրագրեր):

2020 թվակյանին լրանում է «Մշակութային արժեքների ապօրինի տեղափոխման դեմ պայքարի» Փարիզի 1970 թ Կոնվենցիայի 50-ամյակը: Այն ՄԱԿ-ի առավել հայտնի միջազգային փաստաթղթերից է: 2019 թ. ապրիլի դրությամբ Կոնվենցիային անդամակցում է 139 պետություն: Քարտուղարություն կարևորում է նշանակալի այդ հոբելյանի հավուր պատշաճի նշումը և հորդորում անդամ պետություններին քննարկել հնարավոր միջոցառումների ձևաչափեր՝ առաջարկելով դրանք Քարտուղարությանը:

Քարտուղարության հաշվետվությունն ընդունվեց համաժողովի կողմից:

7. Օրակարգայի հարցերի շարքում, դարձյալ կարևորվեց 1970թ. կոնվենցիայի հիմնադրամի խնդիրը: Դեռևս 2015թ. Անդամ պետությունների երրորդ համաժողովի ժամանակ ընդունված բանաձևով նախատեսվում էր ստեղծել Կոնվենցիայի հիմնադրամ, որի միջոցները կուղղվեն երկիրների կողմից Կոնվենցիայի կիրարկման գործընթացներին աջակցելուն: 2015թ. մայիսին Անդամ պետությունների համաժողովի քարտուղարությունը ներկայացրել էր փաստաթուղթ, որով ստեղծվում էր հատուկ հաշվով հիմնադրամ: Հիմնադրամի միջոցները գոյանում են պետությունների կամավոր նվիրաբերումներից, իսկ ծախսային ուղղությունները հաստատվում ընդհանուր ժողովի որոշմամբ: Առայժմ հիմնադրամին աջակցել է Չինաստանի Ժողովրդական

Հանրապետությունը նվիրաբերելով 2016 թ-ին 65.000 ԱՄՆ դոլար: 2017 և 2018թթ Նիդեռլանդները նույնպես նվիրատվություն է կատարել հիմնադրամ 35.000-ական ԱՄՆ դոլար: Այլ երկրներ հիմնադրամին աջակցություն չեն ցուցաբերել, ինչը էապես դժվարացնում է քարտուղարության աշխատանքը առավել արդյունավետ իրականացնել խորհրդատվական և մեթոդական աջակցությունը անդամ պետություններին: Ի թիվս Կոնվենցիային առնչվող տարբեր հավաքներին առավել աղքատ երկրների մասնակցության աջակցության, հիմնադրամը աջակցություն է նախատեսում մշակութային արժեքների ապօրինի շարժի դեմ պայքարի տարբեր ծրագրերի, տեղեկատվական-քարոզչական միջոցառումների, առանձին ոլորտային ցանկերի հրատարակության և համանման գործունեության այլ տեսակների համար:

8. Օրակարգի առանձնակի կարևոր հարցերից էր **Կոնվենցիայի առավել նպատակային կիրարկմանը և դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ զեկույցը:** Դեռ Անդամ պետությունների 4-րդ հանդիպման ժամանակ (2017թ.) Կոնվենցիայի 50-ամյակի նախաշեմին պետությունների կողմից կարևորվեց այդ փաստաթղթի ապագայի հարցը, դրա հետագա կիրարկումն առավել արդյունավետ դարձնելու հրամայականի համատեքստում: Վերոգրյալով պայմանավորված, Քարտուղարությունը պատրաստել և անդամ պետություններին էր ուղարկել հարցաշար, որի պատասխաններից կազմվել էր առաջարկությունների փաթեթը: Առաջարկությունները վերաբերել են երեք հիմնական ուղղություններին՝ Կոնվենցիայի կիրարկման ուժեղացմանը, արդյունավետության բարձրացմանը և դիտահայացության մեծացմանը (visibility): Կոնվենցիայի կիրարկման ուժեղացման համատեքստում զեկոյցն անդրադարձավ իրավական շրջանակների ամրապնդմանը, ինչպես նաև վերադարձի և ռեստիտուցիայի մեխանիզմների պարզեցմանը:

Զեկույցում ընդգծվեց այն հանգամանքը, որ բազմաթիվ երկրների ձևավորած օրենսդրական շրջանակները էապես տարբեր են, միմյանց հետ համաձայնեցված չեն, ինչը բերում է ազգային մակարդակում Կոնվենցիայի կիրարկման տարբեր մակարդակների: Խնդրի լուծման համար անդամ երկրներից **Գերմանիան, մասնավորապես, առաջարկ էր ներկայացրել մշակել տիպային (մոդելային) օրենք՝ հեշտացնելու համար Կոնվենցիայի**

կիրարկման գործընթացը տարբեր երկրների կողմից: Այն կներառեր ինչպես մշակութային արժեքների արտահանման և ներմուծման կանոնակարգման ընդհանուր չափորոշիչներ, այնպես էլ ապօրինի դուրս բերված արժեքների վերադարձի միասնական մոտեցումներ: Քննարկման ժամանակ **հայկական կողմը ընդհանուր առմամբ պաշտպանելով գերմանիայի առաջարկը, հանդես եկավ ելույթով,** ընդգծելով, որ մոդելային օրենքի մշակումը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ բազմաթիվ երկրներ Կոնվենցիայի կիրարկման ճանապարհին արդեն ունեն կայացած և մշակված ազգային օրենսդրություն, որը բխում է Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքներից: *Գերմանական կողմի հետ մասնավոր քննարկման ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց ստանալ մոդելային (տիպային) օրենքի վերաբերյալ իրենց մշակած նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև Գերմանիայի Դաշնության գործող օրենքն այս ոլորտում՝ լավագույն փորձի ուսումնասիրման և կիրարկման նպատակով:*

9. Կոնվենցիայի կիրարկման լավագույն փորձի ներկայացումներ բաժնում անդամ պետությունների կողմից ներկայացվեցին շուրջ մեկ տասնյակ գործեր, որոնցով իրագործվել են գողացված կամ ապօրինի արտահանված մշակութային արժեքների վերադարձի կամ ռեստիտուցիայի գործընթացներ: Ելույթներով հանդես եկան Կանադայի, Հունաստանի, Իտալիայի, Էստոնիայի, Լիտվայի, Գվատեմալայի, Մեքսիկայի և այլ երկկրների ներկայացուցիչները: Առանձին դեպքերի հետ կապված կոնկրետ գործերը (cases) կտեղադրվեն Կոնվենցիայի պաշտոնական կայքում:

10. Թանգարանային հավաքածուների պահպանության և զարգացման առաջարկությունների վերաբերյալ զեկույցը ներառում էր 2017թ. ընդունված փաստաթուղթը և դրանում արտացոլված դիրեկտիվները՝ վերոնշյալ գործընթացների պատշաճ և հետևողական իրագործման ուղղությամբ: Ըստ այդմ, թանգարանային ֆոնդերի պահպանության և զարգացման նպատակով առաջարկվում է ստեղծել թանգարանային արժեքների միջազգային չափանիշներին համապատասխան թվայնացված տվյալների ռեեստր, որը կկառավարվի բարձր տեխնոլոգիական եղանակներով և հնարավորություն կտա արդյունավետ կառավարել և վերահսկել ֆոնդերը: Փաստաթղթով նախատեսվում են հաշվետվություններ 4 տարին մեկ անգամ: Նշվեց հաշվետվությունների համար մշակվող ուղեցույցի մասին, որը կտրամադրվի անդամ պետություններին:

11. Քննարկվեց Անդամ պետությունների գործունեության Կանոնակարգի փոփոխությունների փաստաթուղթը: Փոփոխությունները գերազանցապես տեխնիկական էին, վերաբերում էին Կանոնակարգի կոդիֆիկացիային, ընթացակարգային նորմերին և ըստ էության չէին առնչվում փաստաթղթի բովանդակային մասին:

12. Համաժողովն իրականացրեց Օժանդակ կոմիտեի փոփոխվող անդամների (ռոտացիոն կարգով) ընտրություն: Ըստ այդմ համաձայն տարածաշրջանային խմբերի, ընտրվեցին 6 տարածաշրջանների 9 փոփոխվող անդամները:

    1-ին խմբում Կիպրոսին փոխարինեցին Նիդեռլանդները:

    2-րդ խմբում՝ Հայաստանին և Լեհաստանին փոխարինեցին Ռուսաստանն ու Սլովակիան:

    3-րդ խմբում՝ Բոլիվիային փոխարինեց Էկվադորը:

    4-րդ խմբում Աֆղանստանին ու Հնդկաստանին փոխարինեցին Իրանն ու Չինաստանը:

    5-րդ (a) խմբում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությանը փոխարինեց Բենինը:

    5-րդ (b) խմբում՝ Իրաքին ու Լիբիային փոխարինեցին Լիբանանն ու Ալժիրը:

    Այսպիսով, Օժանդակ կոմիտեի 18 անդամներից 9-ը փոփոխվեցին, նոր երկրները կանդամակցեն կոմիտեին առաջիկա չորս տարիների համար:

13. Նստաշրջանի ավարտին քննարկվեցին աշխատակարգային հարցեր, անդամ պետությունների համաժողովը հաստատեց ներկայացված փաստաթղթերը: Անդամ պետությունների նախնական համաձայնությամբ հաջորդ համաժողովը նախատեսվում է անցկացնել 2021թ. մայիսի 25-26-ը:

1970 թ. կոնվենցիայի անդամ պետությունների համաժողովի Օժանդակ կոմիտեի (Subsidiary Commettee) 7-րդ նստաշրջան (մայիսի 22-23-ը)

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

- ✓ Օժանդակ կոմիտեի ղեկավար կազմի՝ Բյուրոյի ընտրություններ (Նախագահ, փոխնախագահներ, զեկուցող),
- ✓ Քարտուղարկության զեկույցը 2018-19թթ. ընկած հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեության վերաբերյալ,
- ✓ Անդամ պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցների ամփոփիչ անդրադարձ (review),
- ✓ Առաջնային թեմաներ. Բարեվարքություն (պատշաճ կառավարում, պատշաճ կատարում), Համագործակցություն արվեստի շուկաների հետ, Դատական համակարգի ներգրավում, Երիտասարդության ներգրավում,
- ✓ Միջազգային համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործընկեր կազմակերպությունների հետ (UNIDROIT, INTERPOL, WCO, ICOM)
- ✓ Կոնվենցիայի կիրարկման շրջանակներում վերադարձի և ռեստիտուցիայի ներկայացումներ (երկրների օրինակով):

1. Նստաշրջանը մեկնարկեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր քարտուղարի մշակութային ժառանգության հարցերով ներկայացուցչի ողջույնի խոսքով, որից հետո ներկայացվեցին նստաշրջանի օրակարգային հարցերը, ընդունվող փաստաթղթերը: Օրակարգերը հաստատվեցին:
2. Տեղի ունեցան Օժանդակ կոմիտեի ղեկավար կազմի Բյուրոյի ընտրություններ: Բյուրոյի նախագահի պաշտոնում վերստին առաջադրվեց **Եգիպտոսի ներկայացուցիչ Վայել Աբդել Վահաբի** թեկնածությունը: Քարտուղարի (զեկուցող) պաշտոնում առաջադրվեց **Ռուսաստանի Դաշնության** ներկայացուցչի թեկնածությունը: Որպես փոխնախագահներ առաջադրվեցին Կոտ դի Վուարի, Կորեայի, Պերուի և Թուրքիայի ներկայացուցիչները: Առաջադրված բոլոր թեկնածությունները հաստատվեցին: Այսպիսով՝ հաստատվեց **1970թ. Կոնվենցիայի Անդամ պետությունների հանդիպման Օժանդակ կոմիտեի Բյուրոյի կազմը՝**

   Նախագահ՝ *Եգիպտոս՝ Վայել Աբդել Վահաբ (անվանական),*

Զեկուցող՝ *Ռուսաստանի Դաշնություն՝ Ալեքսեյ Կովալենկո-Նարոչնիցկի (անվանական),*

Փոխնախագահներ՝ Ալբանիա, Կիպրոս, Բոլիվիա *(ներկայացուցիչների միջոցով):*

3. Քարտուղարության զեկույցը վերաբերում էր 2018-19թթ. հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կատարված աշխատանքներին: Խոսվեց դեռևս 2018թ. մայիսից Օժանդակ կոմիտեի կողմից հաստատված որոշման մասին, համաձայն որի որպես առաջնային թեմաներ ներկա նստաշրջանին նախատեսվում էր ներառել համագործակցությունը արվեստի շուկաների հետ, պատշաճ կառավարումը (բարեվարքություն), ինչպես նաև նակտիվորեն ներգրավվել քննարկումներում երիտասարդությանն ու դատաիրավական համակրգերը: Որպես ծրագրային առաջնահերթ ուղղություններ և աշխարհագրական առաջնահերթություններ՝ առանձնացվեցին աֆրիկյան երկրները և փոքր կղզիները: Խոսվեց կոնֆլիկտային գոտիներում մշակութային պաշտպանության կարևորության մասին, միջազգային համագործակցության, ուսումնական ծրագրերի և կարողությունների զարգացման միջոցառումների մասին:

4. Ազգային պարբերական զեկույցների ամփոփիչ անդրադարձում (review) ներկայացվեց զեկույցների հետ կապված վիճակագրական պատկերը: Քարտուղարության կողմից ամփոփվել և վերլուծվել են Կոնվենցիայի 139 երկրներից միայն 68 երկրներից ստացված ազգային պարբերական զեկույցներ (այդ թվում՝ հայաստանի կողմից ներկայացվածը): Առաջին անգամ զեկույցները ներկայացվել են էլեկտրոնային եղանակով, ինչը հնարավորություն էր տվել շատ երկրներին կատարել միջազգային այդ պարտավորությունը: Զեկույցները վերլուծվել են բազմաթիվ հատկանիշներով՝ ազգային իրավական համակարգի կայացվածության, մշակութային արժեքների շրջանառության վերահսկելիության, արվեստի շուկաների կարգավորման, արտահանման վերահսկման, արտահանման վկայագրի առկայության, ազգային գույքագրման համակարգի առկայության, ապօրինի պեղումների դեմ պայքարի և բազմաթիվ այլ հայտանիշների համատեքստում:

5. Առաջնային թեմաներ օրակարգային հարցի շրջանակում նեկայացվեցին պրեզենտացիաներ Բարեվարքություն (պատշաճ կառավարում, պատշաճ

կատարում), Համագործակցություն արվեստի շուկաների հետ, Դատական համակարգի ներգրավում, Երիտասարդության ներգրավում թեմաներով: Նշվեց, որ Կոնվենցիայի լիարժեք կենսագործման, հանրության իրազեկության բարձրացման, կազմակերպությունների կարողությունների զարգացման և տեղերում կրթական ծրագրերի իրագործման համար ի թիվս գործող մեխանիզմների և գործիքակազմերի, անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավել երիտասարդությանը: Խոսվեց առկա գործիքակազմերին ի լրումն մշակել ինստիտուցիոնալ մեխանիզմներ դատաիրավական համակարգի հետ ավելի սերտ փոխգործակցության համար:

6. Միջազգային և միջկազմակերպական համագործակցության (UNIDROIT, INTERPOL, WCO, ICOM) կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրեցին համագործակցության, փորձի փոխանակման, համատեղ իրագործված ծրագրերի մասին պրեզենտացիաներ, արդյունավետ գործակցության համար մշակված և մշակման փուլում գտնվող գործիքակազմեր: Խոսվեց նոր գործընկերների, ծրագրային նախաձեռնությունների, արտակարգ միջոցառումների, ինչպես նաև իրականացված ուսուցողական ծրագրերի և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներևի մասին:

ԻՆՏԵՐՊՈԼԻ (INTERPOL) զեկույցում ի թիվս կազմակերպության գործունեության սկզբունքների և հիմնական ուղղությունների, որպես հաջող գործողության օրինակ, ներկայացվեց մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ իրականացված գործողությունները:

Համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) զեկույցը վերաբերում էր ազգային մաքսային ծառայությունների կարողությունների զարգացմանն ու այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Նշվեց մաքսային ծառայությունների աշխատակիցների վերապատրաստման և իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների կարևորությունը, խոսվեց այդ ուղղությամբ իրականացված աշխատանքների և կառուցակարգերի մասին:

Թանգարանների միջազգային խորհուրդը (ICOM) ներկայացրեց ռիսկային խմբում ընդգրկված մշակութային արժեքների Կարմիր ցանկերին և դրանց հետ արդյունավետ աշխատանքին վերաբերող զեկույց: Տրվեցին այդ արժեքների ընդգրկվածության չափորոշիչները, խոսվեց դրանց տիպաբանության մասին:

7. Նստաշրջանի ավարտին Օժանդակ կոմիտեի անդամ պետությունները **հաստատեցին քննարկված հարցերը բանաձևերի տեսքով**: Ամփոփիչ փաստաթղթերը Քարտուղարությունը հնարավորինս սեղմ ժամկետներում կտեղադրի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայքէջում:

8. Փակմանը նախորդեց Օժանդակ կոմիտեի հաջորդ նստաշրջանի ժամկետների քննարկումը: Ներկաների համաձայնությամբ որոշվեց 1970 թ. կոնվենցիայի անդամ պետությունների հանդիպման **Օժանդակ կոմիտեի 7-րդ նստաշրջանը** գումարել 2020 թ. մայիսին (օրը կհայտարարվի լրացուցիչ):

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ մշակույթի նախարարության, որպես 1970 թ. Փարիզի կոնվենցիայի Անդամ պետությունների համաժողովի և Օժանդակ կոմիտեի (2015-ից) անդամ ունեցավ կանոնավոր մասնակցություն նշված հանձնաժողովների հերթական լիագումար նստաշրջաններին: ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչի հետ հայաստանյան պատվիրակության կազմում, մշակույթի նախարարության ներկայացուցիչը իր **մասնագիտական մասնակցությունը** բերեց նստաշրջանների ընթացքում քննարկվող հարցերի, ընդունվող բանաձևերի, խորհրդատվական փաստաթղթերի մշակման և ընդունման գործում, ինչը կարևոր է պատվիրակության լիարժեք և ընդգրկուն մասնակցության համատեքստում:

2. Կոնվենցիայի պաշտոնական մարմիններին անդամակցությունը և մասնակցությունը տեղի ունեցող նստաշրջաններին մեծ կարևորություն ունեն ինչպես վերը նշված կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, կոնվենցիայի լիարժեք կիրարկման, այդ ուղղությամբ իրականացվող ներպետական ընթացակարգերի կատարելագործման, այնպես էլ ՀՀ մշակութային քաղաքականության

իրականացման համատեքստում միջազգային կապերի ու համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման, լավագույն իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրման և ներդրման առումներով: Նստաշրջաններին մասնակցությունը համընդհանուր և ընդգրկուն տեղեկատվության հնարավորություն տվեց դրանց ընթացքում Անդամ պետությունների համաժողովի և Օժանդակ կոմիտեի կողմից քննարկված և ընդունված փաստաթղթերի (բանաձևեր, մեթոդական ուղեցույցներ, խորհրդատվական նյութեր և այլն) վերաբերյալ, ինչը պարտադիր պայման է Հայաստանի Հանրապետության կողմից այդ բանաձևերի ժամանակին և պատշաճ կատարման համար (միջազգային պարտավորություններ):

3. Կոնվենցիայի պաշտոնական մարմինները կոչված են միջազգային այդ փաստաթղթի կիրարկման շրջանակներում մշակել և անդամ պետություններին ներկայացնել մասնագիտական ուղեցույցներ, առաջարկներ, մեթոդաբանական և այլ փաստաթղթեր: Հանձնաժողովների նիստերին քննարկվում և ընդունվում են բանաձևեր, առաջարկներ, հավելվածներ և այլ փաստաթղթեր, որոնք տրամադրվում են պետություններին կատարման նպատակով: Անդամ պետությունների ընդհանուր համաժողովը Կոնվենցիայի բարձրագույն մարմինն է, որը վերջնականապես հաստատում է կոմիտեներում մշակված բանաձևերը, ուղեցույցները, խորհրդատվական և մեթոդական բնույթի փաստաթղթերը, տրամադրելով դրանք պետություններին որպես ցուցումներ և մեթոդական ուղեցույցներ՝ ի կատարումն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների: **Մասնակցությունն այդ փաստաթղթերի մշակմանը** ապահովեց ՀՀ մշակույթի նախարարության տեսակետների և դիրքորոշումների ներկայացումը ու ընդգրկումը այդ փաստաթղթերում, ինչը կարևոր նշանակություն ունի մեր երկրում իրականացվող մշակութային քաղաքականության, ստանձնած միջազգային պարտավորությունների և միջազգային համագործակցության

տեսանկյունից (ներկայացված առաջարկների և ելույթների մասին՝ մանրամասն անդրադարձ է արվել տեքստում):

Ստորագրություն

30.05.2019 թ.